«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

# ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

# ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

*Հետազոտության թեման՝ Սովորողների քննադատական մտածողության զարգացումը առարկայի ուսուցման գործընթացում*

*Առարկան՝ դասվար*

*Հետազոտող ուսուցիչ՝ Ռիտա Ղանդիլյան*

*Ուսումնական հաստատություն՝ Արմեն Հովհաննիսյանի անվան համար 194 հիմնական դպրոց*

*Երևան 2022*

## Ներածություն

Սովորողների ճանաչողական կարողությունների ձևավորումն ու զարգացումը ժամանակակից մանկավարժության կողմից դիտարկվում է որպես արդի հասարակական պահանջ և կրթության կարևոր խնդիր: Ուսուցման գործնթացի գլխավոր նպատակն է սովորողին պասսիվ ունկնդրի դերից փոխել ակտիվ մասնակցի դերով, որի շնորհիվ աշակերտները կդառնան առավել անկաշկանդ ու ինքնուրույն, նրանց մոտ կձևավորվեն ուսման նկատմամբ մոտիվացիա, ճանաչողական հետաքրքրություններ ու կարողություններ: Այս գործում մեծապես նպաստում է քննադատական մտածողությունը: 21-րդ դարում թվային տեխնոլոգիաների զարգացման հետ մեկտեղ քննադատակն մտածողությունը ձեռք է բերել հատուկ արժեք: Մեր օրերում տեղեկատվությունն այնքան շատ է, որ նույնիսկ մեծահասակները դժվարանում են առանձնացնել անհրաժեշտ տեղեկությունը, ճշմարտությունը ստից: Մարդիկ անընդհատ ներգրավված լինելով համացանցում կորցնում են մտածողության և գործունեության նպատակասլացությունը և ավելորդ ժամանակ և մտավոր ուժեր են են ծախսում ավելորդ բաների վրա: Սահմանափակվում են դեմ առ դեմ շփումները: Ժամանակաշրջանի թելադրանքով երեխաների կրթությունն առանց գաջեթների և ինտերնետի գրեթե անհնար է դառնում: Երեխային պարզապես ձգում է այն ամենը, ինչը վառ է, դինամիկ և հուզիչ: Այստեղ մեծ վտանգ կա, որ երեխան կտարվի տեղեկատվական այլ ալիքներով, կներգրավվի վտանգավոր խմբերում կառաջանա կախվածություն համացանցից և կհանգեցնի հոգեկան հիվանդության: Հոգեբանական իմաստով քննադատական մտածողությունը ծառայում է կառուցել անհատի ներաշխարհը և պաշտպանել ես-ի սահմանները կործանարար արտաքին ազդեցությունից:

Այս ամենից ելնելով համարում եմ, որ քննադատական մտածողության զարգացումը նպաստում է տարական դպրոցի ուսուցման գործնթացի արդյունավետությանը, ակտիվացմանը սովորողների բնականոն զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծմանը, ճանաչողական կարողությունների զարգացմանը: Ճանաչողական ակտիվության, ճանաչողական հետաքրքրության ու ճանաչողական կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը միտված են նոր

մոտեցումներ և գաղափարներ:Որոնք նպատակաուղղված են աշակերտին պասիվ վերարտադրողից դարձնել ակտիվ մասնակից: Սովորողների համար բնականոն զարգացման նպաստավոր պայմաններ ստեղծելով, երեխաների տարիքային և անհատական առանձնահատկությունների համապատասխան պայմաններ, աշխատանքի տեմպ ու կազմակերպման ձև ապահովվելով կարելի է զարգացնել քննադատական մտածողությունը: Որի համար կիրառվում է հստակ սահմանված փուլեր՝ խթանում, իմաստավորում և կշռադատում: ԽԻԿ համակարգի միջոցով խթանվում և վեր են հանվում սովորողների ունեցած գիտելիքները, իմաստավորվում և կշռադատվում են ուսուցանվող նյութը՝ վերլուծության, համադրության, համեմատությունների և եզրահանգումների միջոցով: Հիմնականում օգտագործվում է մեթոդախումբ, ընդ որում յուրաքանչյուր մեթոդ կիրառվում է ԽԻԿ համակարգի կոնկրետ փուլում՝ ելնելով այդ մեթոդի նպատակներից (Մտագրոհ, քառաբաժանում, հնգյակ, Վեննի դիագրամ, կանխագուշակումների աղյուսակ, կենսագրական բանաստեղծություն և այլն): Քննադատական մտածողությունը, որպես կրտսեր դպրոցականների ճանաչողական կարողությունների ձևավորման և զարգացման միջոց դեռևս չի ենթարկվել ամբողջական գիտամանկավարժական ուսումնասիրման և վերլուծության: Տարական դպրոցում քննադատական մտածողության տեխնոլոգիան ենթարկվել է որոշակի փոփոխությունների: Շատ մեթոդներ վերափոխվել են համապատասխանեցնելով կրտսեր դպրոցականի տարիքային ու անհատական առանձհատկություններին: Այս հետազոտության ընթացքում ես կփորձեմ այս մեթոդներից մի քանիսը օգտագործել տեղին ու ժամանակին, նպաստել սովորողնեի ճանաչողական կարողությունների ձևավորմանը, նյութի յուրացումը դարձնել ոչ միայն արդյունավետ, այլ նաև երեխայի համար հաճելի, ընդունելի ու կարևոր:

## Գրական ակնարկ

Քննադատական մտածողության ինտելեկտուալ արմատները նույնքան հին են, որքան նրա ստուգաբանությունը, և, ի վերջո, կարելի է հետևել Սոկրատեսի ուսուցման պրակտիկային և տեսլականին 2500 տարի առաջ, ով բացահայտեց հարցականի մեթոդով, որ մարդիկ չեն կարող ռացիոնալ կերպով հիմնավորել գիտելիքի վերաբերյալ իրենց վստահ պնդումները: Շփոթված իմաստներ, անբավարար ապացույցներ կամ ինքնահակասական համոզմունքներ հաճախ թաքնվում էին հարթ, բայց հիմնականում դատարկ հռետորաբանության տակ: Սոկրատեսը հաստատեց այն փաստը, որ չի կարելի հիմնավոր գիտելիք և խորաթափանցություն ունենալ «հեղինակության» մեջ գտնվողներից: Նա ցույց տվեց, որ մարդիկ կարող են ունենալ իշխանություն և բարձր պաշտոն, սակայն լինել խորապես շփոթված և իռացիոնալ: Նա հաստատեց խորը հարցեր տալու կարևորությունը, որոնք խորապես կխոսեն մտածողության մեջ, նախքան մենք ընդունենք գաղափարները որպես հավատքի արժանի: Նա հաստատեց ապացույցներ փնտրելու, հիմնավորումներն ու ենթադրությունները մանրակրկիտ ուսումնասիրելու, հիմնական հասկացությունները վերլուծելու և ոչ միայն ասվածի, այլ նաև արվածի հետևանքները պարզելու կարևորությունը: Նրա հարցադրման մեթոդն այժմ հայտնի է որպես «Սոկրատյան հարցադրում» և հանդիսանում է քննադատական մտածողության ուսուցման ամենահայտնի ռազմավարությունը: Հարցաքննման իր եղանակում Սոկրատեսը ընդգծեց մտածելու հստակության և տրամաբանական հետևողականության անհրաժեշտությունը:[1] (1.Վերցված է Կալիֆորնիայի ուսուցչի նախապատրաստումից՝ քննադատական մտածողության ուսուցման համար. Հետազոտության արդյունքներ և քաղաքականության առաջարկներ. Կալիֆորնիայի նահանգ, Կալիֆորնիայի ուսուցչի հավատարմագրման հանձնաժողով, Սակրամենտո, Կալիֆորնիա, մարտ 1997թ.: Հիմնական հեղինակներ՝ Ռիչարդ Փոլ, Լինդա Էլդեր և Թեդ Բարթել):

Ըստ Բենջամին Բլումի քննադատական մտածողություն նշանակում է բարձր կարգի մտածողություն:Բարձր ասելով սովորաբար նկատի է առնվում ճանաչողական

հմտությունների դասակարգման աստիճանական զարգացումը:Այն հայտնի է «Բլումի տաքսոնոմիա» անումով: Հետագայում 45 տարի անց Լորին Անդերսոնը Բլումի նախկին ուսանող իննսունականների կեսերին վերանայեց իմացական տիրույթը ուսումնական տաքսոնոմիայի մեջ և փոփոխություններ կատարեց՝ փոքր- ինչ վերադասավորելով դրանք:Այս նոր տաքսանոմիան արտացոլում է մտածողության ավելի ակտիվ ձև և թերևս ավելի ճշգրիտ է: Սթիլ Ջ.Լ, Մերեդիթ.Ք.Ս. և Թեմփել Չ. ( 1988). առաջարկում են «Քննադատական մտածողության զարգացումը կարդալու և գրելու միջոցով» ծրագիրը, այն համագործակցային է ՝ ուղղված մանկավարժության ոլորտում գործող աշխարհի բոլոր մասնագետներին:Այս համագործակցության նպատակն է ամբողջ ուսումնական ծրագրի ընթացքում բոլոր աշակերտների համար ներմուծել քննադատական մտածողություն ձևավորող ու խթանող փոխներգործուն և ինտերակտիվ մեթոդներ:

Կրթության փորձագետ Սերոբ Խաչատրյանը Արևիկ Անափիոսյան հետ զրույցում նշում է.«Չնայած այն, որ քննադատական մտածողությունը քննական դատողությունն է, այսօր այն կորցրել է իր իմաստը, և մենք հաճախ քննադատություն ասելով՝ հասկանում ենք բացասական կոնոտացիայով եզրահանգումներ կամ գնահատականներ տալ: Քննադատական կամ քննական մտածողությունը նույնականացնում են նաև ռեֆլեկտիվ մտածողության հետ, և եթե նայենք այս տեսանկյունից՝ քննական մտածողության հինգ փուլ կա: Առաջին փուլն այն է, երբ մենք փորձում ենք ճանաչել մեր խնդիրը, փորձում ենք տարբեր կողմերից զարգացնել, առաջ գնալ, սցենարներ մշակել, որպեսզի հասկանանք, թե որն է մեր խնդիրը: Երկրորդը փուլը խնդիրը սահմանելն է, ձևակերպելը: Երրորդ փուլում, երբ արդեն ձևակերպել ենք խնդիրը, փորձում ենք ուսումնասիրել, դա զուգորդվում է փաստերի հավաքագրմամբ, այլ մեթոդների կիրառմամբ: Չորրորդ և հինգերորդ փուլերը կիրառման և գնահատման փուլերն են: Գտած պատասխանները փորձում ենք կիրառել, մեր գտած լուծումները մեր խնդիրը լուծո՞ւմ են արդյոք, այնուհետև սահմանում ենք մեր հիպոթեզը՝ ասելով, որ ապացուցել ենք կամ չենք ապացուցել: Քննական մտածողությունը մասնագիտական որա՞կ է, թե՞ քաղաքացիական: Հնարավոր է արդյոք, որ օր.՝ ես, ֆիզիկայի լաբորատորիայում կամ ֆիզիկայի դասաժամին լինեմ քննական մտածող մասնագետ, դուրս գամ ֆիզիկայի

լաբորատորիայից փողոց՝ դեպի հասարակական կյանք և դառնամ հարմարվող, լռող, անտարբեր քաղաքացի…»http://boon.am/arevik-serob/

**Քննադատակն մտածողության զարգացման համար կիրառվում են մի շարք խաղեր, վարժություններ, իրվիճակների քննարկումներ, հարցեր և այլն:**

**Օրինակ՝ Լրացրեք ձեր գիտելիքների տուփը** Անհնար է քննադատաբար մտածել առանց մեզ շրջապատող աշխարհի մասին բավարար գիտելիքների: Որքան շատ գիտելիք ունեք, այնքան ավելի հեշտ է համեմատել և վերլուծել: Խնդիրը քննադատաբար գնահատելուց առաջ այն պետք է դիտարկել բոլոր կողմերից, իրավիճակը տեսնել այլ իրադարձությունների համատեքստում, ժամանակին հետևել դրա զարգացմանը:

**Մշտապես թարմացրեք ձեր գիտելիքները տարբեր ոլորտներում.** կարդալ գեղարվեստական և գիտահանրամատչելի գրականություն,դիտել վավերագրական ֆիլմեր և դասախոսություններ հանրային տիրույթում կրթական պորտալներում, տարբեր ոլորտների մասնագետների Youtube-ալիքներով, բաց դասասենյակներով.

**Դիտել մարդկանց և նրանց վարքագիծը** - դա կօգնի հասկանալ նրանց գործողությունների պատճառը և մշակել տարբեր իրավիճակներում փոխգործակցության ռազմավարություն.

**Խոսեք մարդկանց հետ**, հարցրեք նրանց կարծիքն ու փորձը. սա թույլ կտա ձեզ զարգացնել կամ հստակեցնել ձեր դիրքորոշումը ցանկացած հարցում:

**Սովորեք հարցեր տալ**

Քննադատական մտածողության հիմքում ընկած է հետաքրքրասիրությունը և գիտելիքի ծարավը, և այդ ծարավը հագեցնելու համար անհրաժեշտ է կարողանալ ճիշտ ձևակերպել հարցերը: Սովորեք հարցեր տալ տարբեր թեմաներով: Օրինակ, մարտահրավեր նետեք ինքներդ ձեզ հիսուն հարց տալ ձեր սիրելի ֆիլմի, գրքի, նկարի, աշխարհում տեղի ունեցող երևույթի կամ իրադարձության, առարկայի կամ կոնկրետ թեմայի վերաբերյալ ձեր դպրոցական ուսումնական ծրագրին: Ցանկացած

հարց ուսումնասիրելիս հետաքրքրվեք բոլոր ասպեկտներով, խնդիրը դիտարկեք տարբեր տեսանկյուններից և պարզաբանեք մանրամասները՝ հարցեր տալով:

**Կարդացեք և վերլուծեք տեքստերը**

Քննադատական մտածողությունը զարգանում է գրքերից և համացանցից ստացված տեղեկատվության մշտական վերլուծության շնորհիվ: Վերլուծեք ձեր կարդացած յուրաքանչյուր տեքստ, օրինակ, հետևյալ սխեմայի համաձայն:

Ի՞նչ նպատակով է գրված տեքստը, ո՞ր լսարանին է դիմում հեղինակը, ինչ միտք է ուզում փոխանցել:Ի՞նչ խնդիր է նկարագրված տեքստում, կա՞ դրա լուծման մեկ տարբերակ, թե՞ կան տարբեր տարբերակներ:

Ինչպիսի՞ն է հեղինակի տեսակետը խնդրի վերաբերյալ, ինչ փաստարկներ են կիրառվում, դրանք ուղղակիորեն կամ միայն անուղղակիորեն առնչվում են ձեւակերպված խնդրին:

Որտեղ են տեքստում փաստերը, և որտեղ՝ դրանց մեկնաբանությունը: Սովորեք առանձնացնել մեկը մյուսից՝ կարդալով համացանցում առկա իրադարձությունների մասին հոդվածներ:

Կա՞ արդյոք տեքստում թաքնված իմաստ, ենթատեքստ, և եթե այո, ապա ինչպե՞ս է դա փոխում տեքստի ընդհանուր իմաստը:

Տեքստը վերլուծելիս համոզվեք, որ ձևակերպեք ձեր սեփական վերաբերմունքը խնդրին՝ հիմնված փաստերի, փաստարկների և տրամաբանական հիմնավորման վրա:

Փնտրեք տեղեկատվության այլընտրանքային աղբյուրներ: Հավաստի տեղեկությունն այն է, որը ստացվել է ճշտված պաշտոնական աղբյուրներից և հաստատվել կոնկրետ փաստերով: Ինտերնետում հոդվածները պետք է պարունակեն հղում դեպի աղբյուրը:

**Գտեք տարբերակներ**

Քննադատական մտածել նշանակում է տեսնել իրավիճակի զարգացման տարբեր տարբերակներ՝ կախված որոշակի գործոններից և կարողանալ այս տարբերակներից առանձնացնել ամենաօպտիմալը, հարմարը և արդյունավետը:

Սովորեք **կանխատեսել ձեր գործողությունների հետևանքները** կյանքի ցանկացած իրավիճակում: Որոշում կայացնելիս թղթի վրա գրեք բոլոր հավանական հետևանքները, գնահատեք դրանցից յուրաքանչյուրը, մտածեք, թե ինչպես նվազագույնի հասցնել ձախողման ռիսկը կամ հնարավոր բացասական հետևանքները:

**Մտածեք դժվար իրավիճակներ**ը և կազմեք խնդիրների հնարավոր լուծումների ցանկը:

**Վերլուծեք գրքերի կամ ֆիլմերի հերոսների գործողությունները**, որոնք ազդում են սյուժեի զարգացման վրա: Գտեք այլընտրանքային սցենարներ, որոնք փոխում են կերպարի կյանքը դեպի լավը կամ դեպի վատը:

Վերլուծել սխալները

Մենք հավատում ենք՝ նա, ով ոչինչ չի անում, չի սխալվում: Սխալը ինքնանվաստացման պատճառ չէ, այլ միջոց՝ պարզելու, թե ինչ անել հաջորդ անգամ ավելի խելացի, ավելի լավ և արդյունավետ: Կառուցողական մոտեցում ցուցաբերեք յուրաքանչյուր սխալի վերլուծությանը. գտեք այն, գնահատեք դրա պատճառները, հայտնեք տարբերակներ, թե ինչպես կարելի է խուսափել դրանից: https://media.foxford.ru/critical-thinking/

**Տարրական կրթության մեջ քննադատական մտածողություն սովորեցնելու համար Մինեսոտայի տարրական կրթության ուսուցիչները առանձնացնում են 7 եղանակ**

- **Հարցեր տալ**

  Հարցերը, հատկապես բաց հարցերը, տարրական դասարանների աշակերտներին հնարավորություն է տալիս կիրառելու այն, ինչ սովորել են և հիմնվել նախկին գիտելիքների վրա: Այն նաև թույլ է տալիս նրանց լուծել խնդիրները և մտածել իրենց որոշումների շուրջ, այն բարձրացնում է ինքնագնահատականը՝

հնարավորություն տալով սովորողներին արտահայտվել իրենց հասակակիցների առջև:

- **Խրախուսեք որոշումների կայացումը**

  Քանի որ քննադատական մտածողության հմտությունների ուսուցման մեծ մասը պտտվում է գիտելիքների կիրառման և լուծումների գնահատման շուրջ, տարրական դպրոցի ուսուցիչները պետք է հնարավորինս խրախուսեն որոշումների կայացումը: Սա ուսանողներին հնարավորություն է տալիս կիրառել իրենց սովորածը տարբեր իրավիճակներում, կշռադատել տարբեր լուծումների դրական և բացասական կողմերը, այնուհետև որոշել, թե որ գաղափարներն են լավագույնս աշխատում:

- **Խմբային աշխատանք**

  Խմբային նախագծերն ու քննարկումները տարրական դպրոցի ուսուցիչների համար քննադատական մտածողության հմտությունները խրախուսելու ևս մեկ հիանալի միջոց են: Համատեղ ուսուցումը ոչ միայն բացահայտում է սովորողների իրենց դասընկերների մտքը, այլև ընդլայնում է նրանց մտածողությունը և աշխարհայացքը՝ ցույց տալով, որ խնդրին մոտենալու ճանապարհը միակը չէ:

- **Ներառեք տարբեր տեսակետներ**

  Տարրական դպրոցի աշակերտների համար քննադատական մտածողության լավագույն վարժություններից մի քանիսը ներառում են հայեցակարգի ուսումնասիրություն բազմաթիվ տեսանկյուններից: Այս մարտավարությունը ոչ միայն հաստատում է, որ գաղափարը պետք է գնահատվի տարբեր տեսակետներից, նախքան կարծիք ձևավորելը, այն ուսանողներին հնարավորութ յուն է տալիս կիսվել իրենց տեսակետներով՝ լսելով և սովորելով ուրիշներից:

- **Միացնել տարբեր գաղափարներ** Տարբեր գաղափարների միացումն առանցքային է քննադատական մտածողության ուսուցման համար: Դրա համար պետք է առաջարկել: Հարցերն օգնում են երեխաներին դիտարկել տարբեր իրավիճակներ և հնարավոր լուծումներ, օգնելով նրանց կիրառել նախնական գիտելիքները նոր համատեքստերում:

- **Ոգեշնչել ստեղծագործել**

  Երևակայությունը տարրական դպրոցում քննադատական մտածողության ուսուցման բանալին է: Ուսուցիչները պետք է նոր ուղիներ փնտրեն ուսանողների

համար՝ օգտագործելու տեղեկատվությունը նոր բան ստեղծելու համար: Արվեստի նախագծերը դա անելու հիանալի միջոց են: Ուսանողները կարող են նաև ստեղծագործել, գրել պատմություն կամ բանաստեղծություն, ստեղծել խաղ, երգել:

**Մտքերի փոթորիկը** տարրական կրթության մեջ հիանալի ուսուցման գործիք է: Սա նաև քննադատական մտածողության հիանալի վարժություն է, հատկապես, երբ զուգորդվում է տեսողական տարրերի հետ, որոնք կյանքի են կոչում բնօրինակ մտածողությունը և դասարանային քննարկումները https://www.waldenu.edu/online-bachelors-programs/bs-in-elementary-education/resource/seven-ways-to-teach-critical-thinking-in-elementary-education

**Հետազոտության ընթացքը**

Հետազոդության ընթացքում դիտարկել եմ աշակերտների քննադատական մտածոզության զարգացումը հարցերի միջոցով՝ հենվելով իրենց նախնական ճանաչողական գիտելիքների, դասից ստացած և ընկերներից լսած տեղեկությունների վրա: Իմ նպտակն էր աշակերներին պասսիվ վերարտադրողի դերից քննադատական մտածողության միջոցով փոխարինել ակտիվ մասնակցի դերով, ստեղծելով նպաստավոր պայմաններ, ազատ, անկաշկանդ արտահայտվելու: ԽԻԿ համակարգի միջոցով խթանել և վեր եմ հանել սովորողների ունեցած գիտելիքները, աշակերտները իմասատավորել և կշռադատել են ուսուցանվող նյութը առաջին դասաժամին սահմանափակվելով միայն դասանյութի բովանդակության վերաբերյալ հարցերով և տվյալներով: Իսկ երկրորդ դասաժամին, պահպանելով դարձյալ ԽԻԿ համակարգը, դասանյութի իմաստը վեր ենք հանել քննադատական մտծողությունը զարգազնող հացերի միջոցոով վերլուծել են տեքստը, համադրություններ են կատարել իրենց նախնական և ձեռք բերած գիտելիքների միջև, կատարել են համեմատություններ և եզրահանգումներ, գտել են կապը կյանքի հետ, արժևորել են բնության պահպանությունը: Հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ առաջին դասաժամին նյութի յուրացման տարբեր փուլերում աշակերտներն այնքան էլ ակրիվորեն չէին մասնակցում, ակտիվության մակարդակը ավելի ցածր էր, իսկ երկրորդ դասաժամին նորովի անցած նյութի տարբեր փուլերում ցուցաբերեցին մեծ

ակտիվություն, սովորել սովորելու ձգտումն էլ ավելի էր, հանձնարարեցի դասից հետո, տրված հողումից օգտվելով, լրացնել հետաքրքրությունը Հայաստանի լեռների մասին:

**Դասապլաններ**

**Օր 1**

**Դասարան՝ 3-րդ, դասվար՝ Ռ. Ղանդիլյան**

Առարկա՝ մայրենի

Դասի թեման՝ «Սարը»

Ժամաքանակ՝ 1

Դասի տիպը՝ հաղորդման

**Դասի նպատակները.**

**1. Գիտելիքներ**

Տարբերել հականիշ բառեր, խոսքում ճիշտ կիրառել բազնիմաստ բառերը:

Հասկանալ կարդացածի վերաբերյալ առաջադրված հարցերը;

Հասկանալ տեքստում նկարագրված իրադարձությունների հաջորդականությունը:

**2. Կարողություններ , հմտություններ**

Կարողանան լուռ ընթերցել՝ կենտրոնանալով առանձին հատվածների վրա:

Իրավիճակին համապատասխան ոչ ծավալուն բանավոր տեքստ կկազմեն:

**գ/ Արժեքային համակարգ**

Ձևավորել լեզվական հաղորդակցային հմտություններ:

**դ/ Ակնկալվող արդյունքներ**

Կզրուցեն զույգի հետ՝ պատմելով իրենց երազանքների մասին:

Մտքում կընթերցեն տեքստը առանձնացնելով տպավորիչ հատվածները:

Կընթերցեն տեքստը անսխալ և ճիշտ առոգանությամբ:

Հարցերի միջոցով կվերհանեն տեքստի բովանդակությունը:

Կվերարտադրեն տեքստը պահպանելով դեպքերի հաջորդականությունը:

**Անհրաժեշտ պարագաներ՝** սարերի նկարներ, թղթեր, գրիչներ:

**Կապը այլ առարկաների հետ՝** Ես և շրջակա աշխարհը

**Մեթոդները՝** «5 րոպեանոց շարադրանք», «Կանխագուշակման աղյուսակ», «Շրջայց պատկերասրահում»:

**Խթանման փուլ: /7 րոպե/**Զրույց «Իմ երազանքները» թեմայով: Առաջարկել երեխաներին գրել իրենց երզանքների մասին, ապա պատմել զույգին իր երազանքի մասին: Հետաքրքրվել՝ արդյոք համընկան իրենց երազանքները: Հարցնել, թե ինչ են կարծում իրենց երազանքները երբ կկատարվեն:Ի՞նչ եք կարծում սարերը կարող են մեծանալ և երազանք ունենալ: (Լսել մի քանի պատասխան):

**Իմաստի ընկալման փուլ:/ 15 րոպե**/ Տեքստի լուռ ընթերցում: Առաջարկել լուռ ընթերցել և պարզել, թե արդյոք ճիշտ էին իրենց ենթադրությունները:

Երկրորդ ընթերցում: Աշակերտները լուռ կնթերցեն և կրկնակի գրառումների օրագիր մեթոդի միջոցով դուրս կբերեն տեքստի ամենատպավորիչ հատվածը և դիմացը կգրեն, թե ինչ է հիշեցնում իրենց այդ հատվածը:

Երրորդ ընթերցում: Ուսուցչի կողմից:Կարդալ տեքստը և յուրաքանչյուր պարբերությունից հետո տալ բովանդակությունը վեր հանող հարցեր:

Ինչի՞ մասին էր այս հատվածը:

Ի՞նչ էր մտածում փոքրիկ սարը:

Ինչո՞վ էին հայտնի բոլորը մեծ սարերը:

Ինչու՞ էր փոքրիկ սարը նախանձում մեծ սարերին:

**Ֆիզկուլտդադար:/3 րոպե/** Խաղալ «Թզուկներ- հսկաներ» խաղը:

**Կշռադատման փուլ:** /10 րոպե/

Առաջարկել ուշադիր դիտել նկարը և ասել, թե պատմվածքի ո՞ր հատվածն է պատկերված նկարում: Ի՞նչ է անում փոքր սարը, իսկ մեծե՞րը: Նկարիչն ի՞նչ գույներ է օգտագործել հերոսներին պատկերելու համար: Նկարել սարեր:

**Գնահատում՝ ուսուցանող**

**Անդրադարձ:** Հայտորոշիչ թեստ:

1.Ովքե՞ր էին հեքիաթի հերոսները:

2. Գծիկով միացրու համապատասխան բառերը:

| | |
|---|---|
| մեծ սարերը | քնում էր |
| փոքր սարը | կարմրին էին տալիս |
| | երազում էր |
| | արձագանքում էին |

3.Ի՞նչ էր երազում փոքր սարը:

4.Ի՞նչ էր ցանկանում ունենալ:

5.Ինչու՞ էր ուզում նշանավոր դառնալ (Նշի՛ր ամենաքիչը երկու բան):

**Տնային աշխատանք: Կարդալ, էջ 48:**

**Օր 2**

**Դասարան՝ 3-րդ, դասվար՝ Ռ. Ղանդիլյան**

Առարկա՝ մայրենի

Դասի թեման՝ «Սարը»

Ժամաքանակ՝ 1

Դասի տիպը՝ նյութի հաղորդման

**Դասի նպատակները**.

**1. Գիտելիքներ**

Խոսքում ճիշտ կիրառել բազմիմաստ բառեր: Հասկանալ տեքստի բովանդակությունը, նկարագրդման և սեփական կենսափորձի միջև կապերը: Գնահատել գործող կերպարների «վարքագծի» դրդապատճառները:

**2. Կարողություններ , հմտություններ**

Լսել խոսքը, լրացուցիչ տեղեկություններ հաղորդել, նոր վերաբերմունք դրսևորել

Նկարագրվող դեպքերի վերաբերյալ:

**գ/ Արժեքային համակարգ**

Ձևավորել հարգանք և հանդուրժողականություն ուրիշների նկատմամբ, ձևավորել ինքնավստահություն, հասկանալ իր խնդիրները և վստահել սեփական ուժերին:

**դ/ Վերջնարդյունքներ**

Ակտիվորեն կմասնակցեն հարց ու պատասխանին, կլսեն և կհասկանան արտահայտած մտքերը նախընտրած ձևով կներկայացնեն իրենց մտքերն ու զգացումները լսածի, տեսածի, զգացածի ընթերցածի իրենց ուղղված և հետաքրքրող հարցերի մասին:

**Անհրաժեշտ պարագաներ՝** Հայաստանի բարձր լեռների նկարների ցուցադրություն ՏՀՏ-ի միջոցով, հարցաթերիկներ, գրիչներ

**Կապը այլ առարկաների հետ՝** Ես և շրջակա աշխարհը

**Մեթոդները՝** «Հարց ու պատասխան», «5 րոպեանոց շարադրանք»

Մինչ դասը սկսելը հիշել «Տերևը» բանաստեղծությունը: Հարցերի միջոցով վերհանել երեխաների ճանաչողական գիտելիքները և զարգացնել քննադատական մտածողությունը:

**Խթանման փուլ: /7 րոպե/**

Ի՞նչ եք կարծում, ո՞ր սարի վրա ավելի շուտ կնստի եղյամը: Ինչու՞:

Ի՞նչ բարձր սարեր գիտեք:

Ինչո՞վ են հայտնի ձեր նշած սարերը:

**Իմաստի ընկալման փուլ:/ 20 րոպե/**

Առաջարկել կարդալ դասի առաջին հատվածը, ապա տալ հարցեր:

Սարն ինչպիսի՞ն էր:

Ի՞նչ եք կարծում  ինչպես են ծնվում սարերը և ինչպես կարող են մեծանալ ( լսել պատասխանները,եթե հարկ լինի լրացնել ՝ երկրաշարժների և հրաբուխների միջոցով):

Ի՞նչն էր պատճառը, որ մեծ սարերը կարմրին էին տալիս (լսել պատասխանները, եթե բաց թողումներ լինեն , ապա լրացնել՝ ասելով որ մայրամուտին արևի ճառագայթները մեծ թեքությամբ  «բարձրանում են ներքևից վերև» և լուսավորում են լեռների գագաթները, ցույց տալ օրինակով՝ մեծ և փոքր կոներ լապտեր):

Առաջարկել գտնել ձայնի ճիշտ հնչերանգ և կարդալ փոքրիկ սարի մտածմունքը:

Ի՞նչ էր զգում փոքրիկ սարը:

Առաջարկել գտնել և կարդալ այն հատվածը, որտեղ խոսվում է մեծ լեռների նշանավոր լինելու մասին:

Ինչո՞վ են  նշանավոր մեծ լեռները:

Ինչպե՞ս են կատարում լեռների հետազոտություններ և ինչի՞ համար:

Հնարավո՞ր է, որ լեռները անհետանան: Ինչպե՞ս:

Շարունակել մինչև վերջ :

Արդյոք փոքրիկ սարը հիմնավոր պատճառներ ուներ մեծ սարերին նախանձելու համար: Մեծ սարերը գիտեի՞ն այդ մասին: Եթե իմանային ի՞նչ խորհուրդ կտային:

**Ֆիզկուլտդադար: /3 րոպե/** Խաղալ  «Թզուկներ- հսկաներ» խաղը:

**Կշռադատման փուլ:** /5 րոպե/  Առաջարկել ուշադիր նայել նկարին և գտնել , թե ինչո՞վ է փոքր սարը տարբերվում մեծ սարերից: Ինչ խորհուրդ կռաք փոքր սարին, ինչով է արժեքավո: Գրել 5 րոպեանոց շարադրանք:

**Գնահատում՝** միավորային

**Անդրադարձ:** Ի՞նչ կլիներ, եթե սարերն անհետանային:

**Տնային աշխատանք:** Գրել տեղեկություն Հայաստանի սարերից որևէ մեկի մասին օգտվելով հետևյալ հղումից՝

https://armeniadiscovery.com/hy/articles/armenian-mountains

**Տվյալների մշակում և վերլուծություն**

Դիտարկումն անցկացրել եմ *դիտարկում* մեթոդի օգնությամբ, դասերի ընթացքում սովորողների ակտիվության բարձրացման մակարդակը գրանցել եմ բնական պայմաններում անմիջական հավաքագրման եղանակով: Հաշվարկները կատարելու համար օգտագործել եմ աղյուսակներ, դիագրամներ:

**Առաջին օրվա արդյունքները աղյուսակում հետևյալ են**

| | Խթանում | Իմաստի ընկալում | Կշռադատում |
|---|---|---|---|
| Ճանաչողական գիտելիքներ | 8 | 15 | 11 |
| Հաղորդակցական կարողություններ | 14 | 18 | 19 |
| Ստեղծագործական կարողություններ | 0 | 1 | 15 |
| Արժեքային համակարգ | 12 | 10 | 15 |

**Երկրորդ օրվա արդյունքները աղյուսակում հետևյալ են**

| | Խթանում | Իմաստի ընկալում | Կշռադատում |
|---|---|---|---|
| Ճանաչողական գիտելիքներ | 15 | 18 | 24 |
| Հաղորդակցական | 17 | 20 | 21 |

| | | | |
|---|---|---|---|
| կարողություններ | | | |
| Ստեղծագործական կարողություններ | 0 | 18 | 22 |
| Արժեքային համակարգ | 14 | 16 | 23 |

Առաջին օրվա արդյունքները դիագրամի տեսքով հետևյալ են




Երկրորդ օրվա արդյունքները դիագրամի տեսքով հետևյալ են




Արդյունքների տեսանելի վերլուծությունից պարզեցի, որ դասի տարբեր փուլերում կախված հարցադրումներից կարող ենք զարգացնել երեխաների քննադատական մտածողությունը, տալով նրանց հնարավորություն նախ վերհանել և ստանալ ճանաչողական գիտելիքներ, ապա ձևավորել արժեհամակարգ, դիրքորոշում:

## Եզրակացություն

Թեև համացանցը դարձել է մեր կյանքի անբաժանելի մասը (հատկապես համացանցից ճանաչողական գիտելիքներ ձեռք բերելու համար) և տեղեկատվական հաղորդակցակն տեխնոլոգիաները, կարծես, պայքարի մտած լինեն անձնային դեմ առ դեմ շփման հետ, միևնույն է անձնային բարձր որակների ձևավորման համար անփոխարինելի են մարդ-մարդ փոխհարաբերությունները: Զարգացնելով երեխաների քննադատական մտածողությունը ( որն ի դեպ կարող են զարգացնել ծնողները դեռևս վաղ տարիքից խաղ-հարցերի միջոցով ), ոչ միայն ինտերակտիվ մեթոդների միջոցով, այլ նաև հենվելով ճանաչողական գիտելիքների, աշակերտ-աշակերտ հաղորդակցման և բաց հարցերի վրա, կարող ենք նրանց օգնել ունենալ սեփական դիրքորոշում մի շարք կոնկրետ իրավիճակներում: Իմ վերլուծություն-ների արդյունքում պարզեցի, որ երեխաների քննադատական մտածողության զարգացման գործամ մեծ է նաև ուսուցչի հարցադրումների ուղղվածությունը, որի միջեցով աշակերտին պասսիվ վերարտադրողի դերից մղում է ակտիվ մասնակցի դերի, որն էլ նպաստում է սովորողների բնականոն զարգացմանը: Ուսուցիչն ինքը պետք է ստեղծի նպաստավոր պայմաններ (երեխաների տարիքային և անհատական առանձնահատկությունների համապատասխան), աշխատանքի տեմպ ու կազմակերպման ձև ապահովելով: Ուսուցիչ պետք է վերանայի իր գործունեությունը և կախված հայրենիքի զարգացման, հայրենիքի տնտեսական աճի, հայրենիքի բնապահպանական, ընդհանրապես Երկիր մոլորակի 21-րդ դարի խնդիրներից ձևավորի աշակերտների քննադատական մտածողությունը:

## Օգտագործված գրականության ցանկ

Հետազոտության արդյունքներ և քաղաքականության առաջարկներ. Կալիֆորնիա, Կալիֆորնիայի ուսուցչի հավատարմագրման հանձնաժողով, Սակրամենտո, Կալիֆորնիա, մարտ 1997թ.: Հիմնական հեղինակներ՝ Ռիչարդ Փոլ, Լինդա Էլդեր և Թեդ Բարթել

Սթիլ Ջ.Լ, Մերեդիթ.Ք.Ս. և Թեմփել Չ( 1988). առաջարկում են «Քննադատական մտածողության զարգացումը կարդալու և գրելու միջոցով» ծրագիրը

http://boon.am/arevik-serob/

https://media.foxford.ru/critical-thinking/

https://www.waldenu.edu/online-bachelors-programs/bs-in-elementary-education/resource/seven-ways-to-teach-critical-thinking-in-elementary-education